ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ N 50

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-ին կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 2019 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 7 հերթական նիստի օրակարգը.

- Վայք համայնքի ավագանու 2019թ. հուլիսի 18-ի «Համայնքային երիտասարդական նորարական կենտրոն»-ում խմբակ հաճախող երեխաների համար 2018 թվականի ծնողական վճարի չափ սահմանելու մասին>> թիվ 47 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
  /զեկուցող աշխատակազմի քարտուղար Գագիկ Մուշկամբարյան/
- Վայք համայնքի սեփականություն համարվող հողամասերը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վճարի չափը և պայմանները հաստատելու մասին:
  /զեկուցող աշխատակազմի գլխավոր մասնագետ Ռոման Մկրտչյան/
  - Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին:
    /զեկուցող ֆինանսական բաժնի պետ Նատալյա Հովհաննիսյան/
  - Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի հարցի քննարկում:
    /զեկուցող Վիգեն Գասպարյան/
  - Վայք համայնքի Ազատեկ գյուղում խմելու ջրի ջրաչափի ծախսած մեկ խորանարդ մետրի սակագինը սահմանելու մասին:
    /զեկուցող Վիգեն Գասպարյան/
  - ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
    /զեկուցող Ռոման Մկրտչյան/:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ N 51

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18/07/2019թ. <<<<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆՈՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>-ՈՒՄ ԽՄԲԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 47 ՈՐՈՇՄԱՆ/ՆԻՍՏ N 6/ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի ավագանու 18/07/2019թ. << Համայնքային երիտասարդական նորարական կենտրոն»-ում խմբակ հաճախող երեխաների համար ծնողական վճարների 2018 թվականի ամսական չափը սահմանելու մասին>> թիվ 47 որոշման /նիստ N 6/ վերնագրում և առաջին կետում նշված <<2018>> թիվը փոխարինել <<2019>> թվով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ N 52

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՐԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ և 48[1] հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված Կարգի 46.2 կետի «ա» ենթակետը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 53/63, 53/64, 53/65, 53/66 և 53/67 հասցեներում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 18-ական քմ մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակությամբ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասերը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի գինը սահմանել 4 000 (չորս հազար) դրամ, ժամկետը՝ 25 տարի, նպատակը՝ ժամանակավոր առևտրի տաղավար տեղադրելու համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ N 53

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել ի գիտություն Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը 2019 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված համայնքի ավագանու

10.08.2019թ. թիվ N 53 որոշման

30.06.2019թ. դրությամբ

Եկամտատեսակ	Նախատեսված /տարեկան/	Կատարողական /տարեկան/	Կատարման տոկոս
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	4750.0	1531.7	32.2
Գույքահարկ	28816.4	13225.7	45.9
Տեղական տուրքեր	5690.0	2848.9	50.1
Ընդհամենը գույքի և հողի վարձակալությունից եկամուտներ	12267.0	1256.4	10.2
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	144195.0	72537.6	50.3
Այլ եկամուտներ/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Կարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	34304.1	14108.4	41.1
	230 022.5	105 508.7	45.9

Ծախսային մաս	Նախատեսված /տարեկան/	Կատարողական /տարեկան/	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	67937.4	31055.3	45.7
Պարգևատրումներ	3000.0	205.7	6.9
Էներգետիկ ծառայություններ	4099.0	2393.5	58.4
Կոմունալ ծառայություններ	140.0	11.8	8.4
Կապի ծառայություններ	1000.0	379.9	38.0
Գործուղումներ և շրջագայությունների ծախսեր	200.0	47.2	23.6
Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում	4201.0	1406.1	33.5
Դրամաշնորհներ	153000.0	70405.0	46.0
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	200.0	175.0	87.7
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն	20000.0	3170.1	15.9
Վարչ.սարք.	5322.5	715.0	13.4
Նախագծահետազոտական ծախսեր	2500.0	150.0	6.0

Վայք համայնքի ղեկավար Թ.Ս.Ալեքսյան

Ֆին.բաժնի պետ՝ Ն.Հ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ N 54

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգը <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկը մերժել:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել համակարգի անխափան աշխատանքը և կատարել սույն գործառույթներից բխող բոլոր գործողությունները:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ՎԻԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ N 55

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՉԱՓԻ ԾԱԽՍԱԾ ՄԵԿ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Ազատեկ բնակավայրում ըստ տնտեսությունների թվի տեղադրելու ջրաչափեր:
2. Ազատեկ բնակավայրում խմելու ջրի համար սահմանել հետևյալ սակագինը.

- Ըստ շնչերի մինչև օրական 300 լիտրը անվճար
- 300լ-ից ավել ծախսած յուրաքանչյուր խմ-ի համար 100 դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ N 56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի № 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> № 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի № 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի անդամների 09.09.2019թ. № 87 դրական եզրակացությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, Զեղեա բնակավայրի հողերի օգտագործման սխեմայում՝ քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 4,93496 հա, այդ թվում 2,50753 հա այլ հողատեսք, 0,57116 հա խոտհարք, 0,21136 հա այլ հողատեսք և 1,64491 հա վարելահող /կադաստրային ծածկագիր 10-023-0306-0145/ հողամասը, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորեա՝ արևային ֆոտովոլտային կայանի կառուցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՋԱՆՈՅԱՆ ՄԵՐԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ